



Գեորգեան հոգևոր ճեմարան



Վաչէ և Թամար Մանուկեան Մատենադարան

Հայերէն Սուրբ Գրքի թարգմանութիւնն ու հրատարակութիւնը պատմութեան հոլովոյթում

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 6-8, 2016

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վաչէ և Թամար Մանուկեան Մատենադարան

Էլ. հասցէ. holybible350@gmail.com

Հեռ. +37410 517180/182

2016 թ. լրանում է հայերէն Աստուածաշնչի առաջին տպագրութեան 350-ամեակը: Այս առթիւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ նպատակ ունենալով վերաբժնորել Ոսկան Երևանցու իրականացրած Սուրբ Գրքի հրատարակութեան այս մեծապէս կարևոր իրադարձութիւնը:

Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ Գեորգեան հոգևոր ճեմարանն ու Ս. Էջմիածնի «Վաչէ և Թամար Մանուկեան» մատենադարանը համատեղ նախաձեռնել են «Հայերէն Սուրբ Գրքի թարգմանութիւնն ու հրատարակութիւնը պատմութեան հոլովոյթում» գիտաժողովը: Գիտաժողովի շրջանակներում արդրադարձ կկատարուի մի շարք կարևոր և արդիական թեմաների, որոնք ամփոփուած կը լինեն հետևեալ երեք բաժիններում՝

1. Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան բնագրային վերլուծութիւն:

Այս բաժնում հիմնականում առաջարկուում է անդրադարձ կատարել հայերէն թարգմանութեան տարընթերցումներին և իւրայատկութիւններին՝ համեմատութեամբ եբրայերէն, յունարէն, ասորերէն, լատիներէն և այլ բնագրերի, ինչպէս նաև բնագրային հաւելումներին կամ կրճատումներին:

2. Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան պատմական վերլուծութիւն:

Այստեղ ցանկալի է, որ հեղինակներն անդրադառնան Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեանն առնչուած պատմական զարգացումներին, Աստուածաշնչի կանոնին, ճաշոցներին և հրատարակութիւններին:

3. Աստուածաշնչի աստուածաբանական վերլուծութիւն:

Առաջարկուում է աստուածաբանական տեսանկիւնից ուսումնասիրել Հին և Նոր Կտակարանները՝ յատուկ յղում կատարելով հայերէն բնագրին: Թեմաները կարող են ընդգրկել ինչպէս Աստուածաշնչի գրքերի ամբողջական բաժինների, այնպէս էլ առանձին գրքերի կամ տեղիների վերլուծութիւններ:

Խնդրում ենք՝ զեկոյցների թեմաների առաջարկութիւններ ներկայացնել Գեորգեան հոգևոր ճեմարան մինչև 2016 թուականի օգոստոսի 31-ը: Տեղեկացնում ենք, որ գիտաժողովի զեկոյցները ի մի են բերուելու և հրատարակուելու Սուրբ Գրքի հայերէն առաջին տպագրութեան 350-ամեակին նուիրուած առանձին հատորով: